Հաստատված է
Տնօրեն՝ _____ Հ. Կոստանյան
«31» 08 202 թ.

Ստուգված է՝
Տնօրենի տեղակալ ՄԱԿ գծով՝
/Ն. Պողոսյան/

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ II Գ

ԴԱՍՎԱՐ՝ Ա. Աշուղյան

ՈՒՍՏԱՐԻ՝ 2023-2024

Դասղեկի ժամերի թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

Դպրոցը՝ թիվ 3 հիմն. դպր.

Դասարան՝ 2-րդ «գ»

Դասղեկ՝ Անի Աշուղյան

Դասի համարը	Դասի թեման
1	Բարի գալուստ դպրոց
2	Իմ դպրոցական օրը
3	Իմ դասագրքերը և դրանց ճիշտ օգտագործումը
4	Տարվա եղանակները
5	Ինչպես լինել լավ մարդ և լավ ընկեր
6	Իմ սիրելի կենդանիները
7	Իմ ընտանիքի անդամները
8	Ինչ է պատասխանատվության զգացումը
9	Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում
10	Ինչպես անցկացնել տոները
11	Մեր լավագույն մարզիկները
12	Իմ իրավունքները և պարտականությունները
13	Իմ սիրած ծաղիկները
14	Եթե ես կարողանայի
15	Հայկական ավանդական տոներ
16	Մեր հերոսները և նրանց սխրանքները
17	Հանելուկներ, շուտասելուկներ, առածներ
18	Գիրք նվիրելու օր
19	Ինչ է ազնվությունը
20	Ինչ է կարոտը, հուզմունքը
21	Ճանապարհային երթևեկության կանոներ
22	Ընկերասիրություն, բարեկամություն
23	Սուրբ Զատիկ
24	Աշխատանքը մայրն է ամեն բարիքի
25	Այսօրվա գործը վաղվան չեն թողնի
26	Առաջադիմության քննարկում
27	Համեստությունը զարդարում է մարդուն
28	Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը
29	Զրույց «Հայոց բանակը» թեմայով
30	Մեզ շրջապատող աշխարհը
31	Բարեկիրթ շփում
32	Ինչպես կազմակերպել ամառային հանգիստը

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) II գ դասարանում սովորում են 33 աշակերտ՝ 21 տղա, 12 աղջիկ: Դասարանում ունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նորեկ աշակերտ: Երեխաները նրան ընդունեցին սիրով: Դասարանը կազմակերպված է, կարգապահ: Ձևավորվել է համերաշխ կոլեկտիվ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում: Ուշադրություն դարձնել աշակերտական կոլեեկտիվի ստեղծմանը: Երեխաների մոտ ձևավորել ընկերասիրություն, հանդուրժողականություն, կարգապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն: Դաստիարակել գիտակցական վերաբերմունք ուսման նկատմամբ: Զարգացնել երեխաների մոտ ինքնուրույնություն, աշխատասիրություն, ճշմարտախոսություն, ապրումակցման զգացում: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Աշակերտներին ծանոթացնել հոգևոր արժեքներին, մշակութային ժառանգությանը, հաղորդակից դարձնել մեր ժողովրդի անցյալին: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք մեր երկրի խորհրդանիշների նկատմամբ: Իմանալ դրանց նշանակության մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ստեղծել հաճելի, հարմարավետ դասարանական միջավայր: Նպաստել գեղեցիկի ճիշտ ընկալմանն ու ձևավորմանը: Երեխաների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության, կրթության վերաբերյալ կազմակերպել զրույցներ բանակի, մերօրյա հերոսների վերաբերյալ: Սերմանել քաջություն, հպարտության զգացում: Առաջացնել սեր և հարգանք հայրենիքի պատմական հերոսների նկատմամբ: Կարևորել բանակի դերն ու նշանակությունը:

4. Ֆիզիկական դաստիարակություն Երեխաներին տեղեկություն տալ ֆիզիկական կուլտուրայի առողջարարական նշանակության մասին: Նպաստել ճիշտ կեցվածքի ձևավորմանը, ճիշտ սնվելուն, առողջ սննդակարգին: Ծանոթացնել անձնական հիգիենայի կանոններին: Առաջնորդվել «Առողջ մարմնում, առողջ հոգի» սկզբունքով:

5. Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Նրանց մեջ ձևավորել աշխատասիրություն, համբերատարություն, կամային հատկանիշներ: Զրուցել մասնագիտությունների կարևորության մասին:

6. Բնապահպանական դաստիարակություն Դրսևորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի, բույսերի, ծառերի, կենդանիների նկատմամբ: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում:

7. Դպրոց-ընտանիք կապը Մշտապես ամուր պահել ծնող-ուսուցիչ կապը, ծնողների հետ համագործակցել, ներգրավել դաստիարակչական աշխատանքների մեջ: Հաճախակի կազմակերպել զրույցներ, անհատական խորհրդատվություններ ծնողների, ընտանիքի անդամների հետ: Երեխայի զարգացման ընթացքի վերաբերյալ փոխադարձ տեղեկություն տալ: Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերություններ սահմանել: Ծնողներին ներգրավել աշակերտների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման աշխատանքների մեջ: